INTERNEWS

MEDIA SUPPORT NGO



# ANNUAL REPORT 2006

**10 YEARS WITH BROADCASTING MEDIA**

**Տարեկան հաշվետվություն**

**10 տարի հեռարձակման ոլորտում**

2 From Managing Director
Գործադիր տնօրենի կողմից

3, 4, 6 Regional Media Initiatives
Տարածաշրջանային մեդիա նախաձեռնություններ

5 Public Awareness Project
Հանրության իրազեկության բարձրացման ծրագիր

7 Radio Training and Production
Ռադիո. ուսուցում և արտադրություն

8 Media Legislation and Advocacy
Լրատվամիջոցների շահերի պաշտպանություն

8
- Center for Information Law and Policy
- Alterra

- Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն
- Ալտեռա

9, 10 Financial Report
Ֆինանսական հաշվետվություն



# About Internews

Following its mission of contributing to the development of a democratic and stable society in Armenia by creating conditions for the existence of free, independent and pluralistic media, Internews produces innovative TV and radio programs, trains media professionals, provides legal assistance to media entities and journalists, uses media for regional cooperation and conflict resolution.

# Ինտերնյուսի մասին

Ինտերնյուսի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժողովրդավարական և կայուն հասարակության զարգացմանը, նպաստավոր պայմաններ ստեղծելով ազատ, անկախ և բազմակարծ մամուլի համար: Ինտերնյուսը պատրաստում է նորարարական բնույթի հեռուստատեսային և ռադիո արտադրանք, կազմակերպում դասընթացներ լրագրողների համար, տրամադրում իրավական աջակցություն լրատվամիջոցներին ու լրագրողներին, ԶԼՄ-ներն օգտագործում է տարածաշրջանային համագործակցության ու հակամար-տությունների լուծման համար:

# INFORMATION IS POWER

**From the Managing Director**

2006 marked 10 years of Internews' work with media in Armenia. We have conducted hundreds of seminars, trained thousands of individuals, produced a whole series of television and radio programs, published numerous professional manuals. But figures do not tell the whole story. We have always emphasized our mission above any routine activities, making sure that human faces of those we work on behalf of do not get lost behind the dry sentences of programmatic reports.

For the past 10 years we have operated under an assumption – and a belief – that information is power. Particularly when this information is free. At the same time, we have also stessed that information should always serve the common good. This is our vision.

Internews' strategy document has been developed to follow this vision. In fact, this document is still being developed – simply because this is going to be the very first programmatic strategy document in the history of the organization, a step that we see as a significant achievement on its own right.

2006 marked another milestone – the end of one of Internews' longest running projects, Crossroads, a 10-year-old television program on the life in the three South Caucasus countries. That said, and as sad as it has been to have stopped producing this program, Crossroads did not just finish. Rather, it left a legacy of cross-border dialogue, cooperation and partnership that now informs new regional projects such as Kids' Crossroads, Workshop in the Crossroads and other. A vision born 10 years ago still illuminates what we do, albeit in a new context.

The media community in Armenia faces many problems. Professional development of journalists, keeping up with the rapid development of technology, the growing political and economic pressure, excessive commercialization – these are just some of many issues facing the media that require immediate attention. Addressing these problems is directly related to the information need of society, contributing to the development of democratic values and economic growth of the country as a whole. These are the very processes that we seek to contribute to through dynamic, bright, innovative media initiatives. Hopefully, we are making a difference, in however modest way.

Nouneh Sarkissian

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է

**Գործադիր տնօրենի կողմից**

2006-ը նշանակալից էր Ինտերնյուսի համար: Լրացավ Հայաստանի լրատվամիջոցների հետ մեր աշխատանքի 10 տարին: Մենք կազմակերպել ենք հարյուրավոր սեմինարներ, որոնց մասնակցել են հազարավոր մասնագետներ և ուսանողներ, պատրաստել ենք հարյուրավոր հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, հրատարակել տասնյակ ձեռնարկներ... Կարող ենք շարունակել թվել: Սակայն մեզ համար միշտ կարևոր է եղել այն, որ մեր նպատակները չլուծվեն իրադարձությունների հորձանուտում, և մարդկանց դեմքերը չկորչեն հաշվետվությունների չոր նախադասություններում: Այս տասը տարիները մեզ հավատ ներշնչեցին, որ տեղեկատվությունն ուժ է: Եւ այն առավել է հզորանում, եթե ազատ է ամեն տեսակ ոտնձգություններից: Սակայն շատ կարևոր է նաև, որ տեղեկատվության ուժը գործի հօգուտ մարդու և հանրության: Սա է մեր տեսլականը:

Այս տեսլականի հիման վրա մշակվել է Ինտերնյուսի ռազմավարությունը: Կազմակերպության պատմության մեջ առաջին ծրագրային փաստաթղթի մշակումը, որը սկսվեց 2006 թ.-ին, կարևոր քայլ է մեր առաջընթացի համար:

2006-ին ավարտվեց մեր ամենահին ծրագրերից մեկը՝ «Խաչմերուկ»-ը, որը Հարավային Կովկասի երկրների կյանքի մասին պատմող հեռուստատեսային հաղորդում էր:

Ավելի ճիշտ, «Խաչմերուկը» փոխակերպվեց և սկիզբ դրեց նոր գաղափարների ու ծրագրերի. «Մանկական խաչմերուկ», «Արվեստանոց խաչմերուկում»: Մեր այլ տարածաշրջանային նախաձեռնություններ դարձան 10 տարի առաջ սկսված տեղեկատվության փոխանակման ուղղակի արդյունքը: Սա նոր համատեքստում ծրագրի շարունակության ընդամենը մեկ օրինակ է:

Այսօր մեզ համար ակնհայտ է, որ կազմակերպության կայունությունը պետք է ապահովեն դինամիկ, վառ, նորարար լրատվական նախաձեռնությունները: Մեր աշխատակազմի առջև շատ հիմնախնդիրներ կան. լրագրողների որակավորումը, տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց շարժվելը, ԶԼՄ-ները վերահսկելու և լրագրողների նկատմամբ ճնշումներ գործադրելու փորձերի դեմն առնելը: Ես թվարկեցի ընդամենն այն մի քանի հարցերը, որոնք հիմնավոր լուծման կարիք ունեն: Այս հիմնախնդիրները կլուծվեն, երբ բավարարվի հասարակության՝ ինֆորմացիա ստանալու պահանջը, ինչը կնպաստի մեր երկրում ժողովրդավարության և կայունության հաստատմանը: Այս գործընթացներին նպաստելու գործում էլ տեսնում ենք մեր համեստ դերը:

Նունե Սարգսյան

# CROSSROADS

*Every week Crossroads stories tell us about our neighbors without politicizing the reality. While watching the program I have a feeling of belonging to a unified Caucasus, which seems so far away...*
***A viewer from Armenia***

First aired in 1997, the Crossroads weekly TV news magazine has served to fill the information gap that resulted from the dissolution of the Soviet Union and ensuing conflicts in the South Caucasus. For almost 10 years the program reported on events and people of the South Caucasus countries, contributed, by informing, to overcoming stereotypes and mutual understanding. The program heroes were politicians and artists, women leaders and refugees, disabled people and representatives of various ethnic groups.

Reaching almost 12 million viewers across the South Caucasus, via tens of TV stations, the Crossroads became a unique program. In August 2006, the last – 393rd – program was broadcast, where journalists from Armenia presented reports on Georgia, produced jointly with their Georgian colleagues. Thus, a major project ended, while at the same time becoming a beginning for new ideas.





# ԽԱՉՄԵՐՈՒԿ

*Ամեն շաբաթ «Խաչմերուկի» ռեպորտաժները շատ բան են պատմում մեր հարեւանների մասին՝ չքաղաքականացնելով իրականությունը: Հաղորդումը դիտելիս ինձ զգում եմ ընդհանուր ու միասնական Կովկասի մաս, բայց դա այնքան հեռու է թվում...*
***Հեռուստադիտող Հայաստանից***

1997-ին առաջին անգամ հեռարձակվեց ամենշաբաթյա «Խաչմերուկ» լրատվական հեռուստահաղորդումը: Լրացվեց այն տեղեկատվական բացը, որն առաջացել էր Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասում ծագած հակամարտությունների հետևանքով: Շուրջ տասը տարի հաղորդումը պատմեց Հարավային Կովկասի երկրներում տեղի ունեցող իրադարձությունների ու բնակիչների մասին, իրազեկման շնորհիվ նպաստեց ստերեոտիպերից ձերբազատմանը, օգնեց ինչ-որ հարցերում փոխըմբռնման հասնել: Ծրագրի հերոսներ են եղել քաղաքական գործիչներ ու նկարիչներ, կին առաջնորդներ ու փախստականներ, հաշմանդամներ ու տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներ:



Հարավային Կովկասում տասնյակ հեռուստակայանների միջոցով ունենալով 12 մլն լսարան՝ «Խաչմերուկը» դարձավ յուրօրինակ հաղորդում: 2006 թ.-ի օգոստոսին հեռարձակվեց հաղորդման վերջին՝ 393-րդ թողարկումը, որտեղ Հայաստանի լրագրողները ներկայացրեցին Վրաստանում պատրաստած իրենց ռեպորտաժները: Այս մեծ ծրագիրը նոր գաղափարների սկիզբ դրեց:

# MENK ENK

*While working with my peers from Georgia and Azerbaijan, I realized that there are no Armenians, no Georgians and no Azeris. There are simply people who don't want war.*
***Artak Vardanyan** - Menk Enk journalist*

In 2006, the Kids' Crossroads project entered its third year. With three faces and one soul, this TV program, produced in the three South Caucasus countries in three languages, under three different titles, shares the same content. In Armenia, the program is called Menk Enk, broadcast on the Public TV channel, and it is very popular among young viewers. The program covers a wide variety of topics that interest teenagers in the three countries – Armenia, Georgia and Azerbaijan – and all stories are produced by fellow teenage journalists who have been trained by Internews in each respective country. In 2006, 46 such programs were produced and broadcast.
In addition to producing the program, 18 young journalists from the three South Caucasus countries participated in a summer TV camp in Chakvi, Georgia. During the camp, they were not only trained on the basics of TV journalism and production, but also had an opportunity to produce real news programs with real stories on real live air. Their trainers – a renowned Russian TV journalist Yulia Muchnik, together with the country producers – worked with the young journalists to give them the skills to start producing the weekly TV program covering social, cultural, educational and other issues of interest to young people.



To complement the work of teenage journalists, Internews had also launched a Graphic Design Studio, where young animators produced animation inserts, PSAs and promos for the TV program.



# ՄԵՆՔ ԵՆՔ

*Աշխատելով Վրաստանի ու Ադրբեջանի իմ հասակակիցների հետ՝ հասկացա, որ չկան հայեր, չկան վրացիներ, չկան ադրբեջանցիներ. կան պարզապես մարդիկ, ովքեր չեն ուզում պատերազմ:*
***Արտակ Վարդանյան** - «Մենք ենք»-ի լրագրող*

2006-ին լրացավ հարավկովկասյան «Մանկական խաչմերուկ» ծրագրի երեք տարին: Հարավային Կովկասի երեք երկրներում երեք լեզուներով պատրաստվող այս ծրագիրն ունի երեք դեմք և մեկ մարմին, երեք տարբեր խորագիր, բայց՝ նույն բովանդակությունը: Հայաստանում հեռուստահաղորդման վերնագիրն է «Մենք ենք»: Հաղորդումը բավական հանրաճանաչ է երեք երկրների հանրային հեռուստաընկերությունների երիտասարդ հեռուստադիտողների շրջանում: Տարվա ընթացքում պատրաստվել և հեռարձակվել է 46 հաղորդում: Ծրագիրը պատմում է այն ամենի մասին, ինչ հուզում է երեք երկրների պատանիներին: Հաղորդման թեմաները միշտ յուրօրինակ են: Չնայած երկրներն ու սյուժեները տարբեր են, ուշադրության կենտրոնում են ընդհանուր հետաքրքրություններն ու խնդիրները:

2006 թ.-ի ամռանը Հարավային Կովկասի 18 պատանիներ Չակվիում (Վրաստան) անցկացված ճամբարում ոչ միայն սովորեցին հեռուստատեսային լրագրության և արտադրության հիմունքներ, այլև հնարավորություն ունեցան ներկայացնել դրանք ուղիղ եթերում: Ճամբարի ավարտից հետո նրանք սկսեցին պատրաստել ամենշաբաթյա հաղորդում՝ լուսաբանելով սոցիալական, մշակութային, ժամանցային, կրթական և այլ թեմաներ:

Ծրագրի շրջանակներում գործում էր գրաֆիկական դիզայնի ստուդիա, որտեղ պատանի անիմատորները պատրաստեցին կարճ անիմացիոն մուլտֆիլմեր, անոնսներ և սոցիալական հոլովակներ հեռուստահաղորդման համար:

# MARDAVORS

*If I had seen the program years ago, perhaps I wouldn't have been deceived and left for Turkey.*
***A viewer from Gyumri***



Mardavors ("People Hunting") was a talk-show produced by Internews as part of the IOM Armenia project to raise public awareness on human trafficking. In 2006, 10 shows were broadcast by 10 TV companies in Armenia, and each one of them also produced their own local supplement to the program. Before the production launch, journalists from these stations participated in two training courses conducted by trainers Mary Nazari (Russia) and Harvey Dzodzin (USA) together with Internews staff. Nazari worked with local journalists on organizing effective communication campaigns, while Dzodzin trained them on the advanced production skills for TV programs on social topics.



Mardavors informed the viewers on the issue of human trafficking, detailed the dangers related to it, and provided tips on avoiding these dangers and receiving relevant support. Each story was covered through analytical reports and interviews with experts, with a focus on each individual human story.



# ՄԱՐԴԱՈՐՍ

*Եթե հաղորդումը դիտեի տարիներ առաջ, գուցե չխաբվեի ու չգնայի Թուրքիա:*
***Հեռուստադիտող Գյումրիից***

«Մարդաորս» թոք-շոուն թրաֆիկինգի մասին հասարակության իրազեկության մակարդակի բարձրացման ծրագրի մաս էր: Ծրագիրն իրականացվում էր Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի գրասենյակի հետ համատեղ: 2006 թ.-ին տասը թոք-շոու հեռարձակվեց հանրապետության տասը հեռուստակայաններով, որոնցից յուրաքանչյուրը հաղորդմանն ավելացրեց իր հատվածը: Մինչև հաղորդումների արտադրությունը, դրանք հեռարձակող կայանների լրագրողները մասնակցեցին երկու դասընթացի, որոնք վարում էին խորհրդատուներ Մերի Նազարին (Ռուսաստան) և Հարվեյ Ձոդինը (ԱՄՆ) Ինտերնյուսի մասնագետների հետ համատեղ: Դասընթացների թեմաներն էին արդյունավետ հաղորդակցության քարոզարշավների կազմակերպումը և սոցիալական թեմաներով հեռուստահաղորդումների պատրաստումը:

Հաղորդաշարը հեռուստադիտողին իրազեկում էր հնարավոր դժվարությունների ու վտանգների մասին, տրամադրում ինֆորմացիոն աջակցություն: Անտուալ ռեպորտաժների, փորձագետների հետ հարցազրույցների, քատերական մանրապատումների և իրական պատմությունների միջոցով ներկայացվեցին բարդ խնդիրներ` նպաստելով հաղորդման հանրաճանաչությանը:



# DIALOGUE THROUGH CAMERA

The idea behind this project was both ambitious and risky: training young people from Azerbaijan and Stepanakert to talk to each other through the language of cinema, even though most of them had never held a camera or written scripts before. Partner organizations implementing the project – Internews, Stepanakert Press Club and Conciliation Resources – launched this project based on the belief that young people who represent conflicting parties could listen and understand each other, sympathize and find solutions, through the art of documentary filmmaking. A month of intensive training in Yerevan resulted in the production of five films: A Karabakh Tale; Tough Nut; This Way Fate Knocks On The Door; Citizenship: Refugee; Gone With Life.

The authors depict today's reflection of the Karabakh war through human stories. All films are about the war, though there are no weapons and no fighting.

# ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԱԽՑԻԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Ծրագրի գաղափարը հավակնոտ էր և վտանգավոր. դասընթացներ անցկացնել Բաքվի և Ստեփանակերտի երիտասարդների համար, որպեսզի նրանք կարողանան խոսել միմյանց հետ կինոյի լեզվով: Պայմանն այն էր, որ նրանց մեծ մասը երբևէ տեսախցիկի հետ գործ ունեցած չլինի, կազմած չլինի սցենարներ ու հեռուստատեսային նյութեր: Ծրագրի հեղինակներ Ինտերնյուսի, Ստեփանակերտի մամուլի ակումբի և Հաշտեցման ռեսուրսներ անգլիական կազմակերպության հավաստմամբ, վավերագրական ֆիլմի արվեստի միջոցով հակամարտող կողմերը ներկայացնող երիտասարդները կարողանում էին միմյանց լսել, հասկանալ և լուծումներ գտնել: Երևանում տեղի ունեցած ինտենսիվ դասընթացների արդյունքում ծրագրի յոթ մասնակիցները, Ինտերնյուսի պրոդյուսերների աջակցությամբ, արտադրեցին հինգ վավերագրական ֆիլմ. «Ղարաբաղյան հեքիաթ», «Ամուր ընկույզ», «Այսպես է ճակատագիրը թակում դուռը», «Քաղաքացիությունը՝ փախստական», «Կյանքից քշվածները»:

Հեղինակները ներկայացնում են ղարաբաղյան պատերազմի այսօրվա արձագանքը՝ մարդկային ճակատագրերի միջոցով: Բոլոր ֆիլմերը պատերազմի մասին են՝ չնայած ոչ մի զենք ու կրակոց պատկերված չէ:

# RE-MEDIA: WORKING WITH THE RADIO

*We got tremendous help from Internews. Even those journalists who had no experience in radio now file quality reports during live broadcasts.*

***Sona Simonyan, Radio Hay News Program Coordinator***



The Re-Media project sought to integrate the on-air radio production and online programming to find new ways and expand the coverage of important social issues. To promote radio coverage via the Internet, Internews held online competitions among radio stations inviting visitors of the media.am website to select winners in seven categories: Best Jingle, Best News Program, Best Presenter, Best PSA, Best Talk-Show, Best DJ, and Best Commercial.

Internews also organized five workshops for radio journalists and students of journalism departments. The workshops focused on issues such as animal rights, children, the elderly and human rights protection. During the workshops, participants produced 28 news reports, all of which were aired by radio stations.

Students of journalism departments had an opportunity to further develop and practise their news reporting skills on www.media.am. They used the resources available on the site, as well as the technical advice of trainers, to write scripts and file audio reports. Particularly popular with the users was the Comments page on the website, which developed into an active forum to discuss articles and new ideas.

Finally, Internews trainers conducted three training sessions for regional journalists of the newly created Radio Hay Network. Participants learned radio news reporting skills and filed reports for the network's news program.



# RE-MEDIA: ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆՔ ՌԱԴԻՈՅԻ ՀԵՏ

*Ինտերնյուզը մեզ շատ օգնեց: Նույնիսկ այն լրագրողները, ովքեր ռադիոյում աշխատելու փորձ չունեին, ուղիղ եթերում բավական սահուն ու համակարգված տեղեկություն են հաղորդում:*

**Սոնա Սիմոնյան, «Ռադիո Հայ»-ի լրատվական ծրագրերի համակարգող**

Re-Media ծրագիրն ուներ մի քանի փոխկապակցված բաղադրիչ:

Ռադիոյի մուտքն ինտերնետ խթանելու համար տեղի ունեցավ յոթ օնլայն մրցույթ: Media.am-ի այցելուները հաղթողներ ընտրեցին հետևյալ անվանակարգերում՝ լավագույն իմիջային ջինգլ, լավագույն լրատվական հաղորդում, լավագույն հաղորդավար, լավագույն սոցիալական գովազդ, լավագույն թոք-շոու, լավագույն DJ, լավագույն գովազդ:

Ռադիոկայանների լրագրողների և լրագրության ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպված հինգ գործնական պարապմունքները նվիրված էին ծերերի ու երեխաների խնդիրներին և կենդանիների պաշտպանությանը: Ձեռքբերված տեսական և գործնական գիտելիքները մասնակիցներին օգնեցին պատրաստել 28 լրատվական սյուժեներ, որոնք հեռարձակվեցին տարբեր ռադիոկայաններով:

Ինտերնյուսը լրագրության ֆակուլտետների ուսանողներին հնարավորություն ընձեռեց իրենց ստացած գիտելիքները կիրառել www.media.am կայքում: Մասնագետ լրագրողները խորհրդատվություն տրամադրեցին հոդվածներ գրելու և ռադիոնյութեր պատրաստելու համար: Կայքի «Մեկնաբանություն» հատվածը դարձավ ակտիվ ֆորում այցելուների համար, որոնք քննարկեցին ուսանողների նյութերը:















This Latin expression, meaning "real help," refers to Internews' media advocacy project, which is focused on liberalizing the media legislation to improve the licensing procedure, ease the regulatory environment for broadcasters, and ensure the legal protection of journalists' rights. Implementing the project, Internews produced talk shows, PSAs and films to raise public awareness on the necessity of policy changes and promote media literacy among the public.

Addressing the need to reform the media regulatory environment, Internews developed a Concept Paper reflecting new approaches and international best practices. It is expected that the Concept Paper will serve as a stepping stone for the improved legislation on broadcasting.

In the meantime, Internews lawyers continued to provide media outlets and individual journalists with regular legal assistance, including representing them and serving as defense attorneys during court trials. Information about the project, including FAQ on legal assistance, can be found at http://legal.media.am.

# FAVIO VERITAS

Ինտերնյուսի լրատվամիջոցների և լրագրողների շահերի պաշտպանության ծրագրի խորագիրն է «իրական օգնություն» նշանակող այս լատինական արտահայտությունը:

2006 թ.-ին Ինտերնյուսը զբաղվել է լրատվամիջոցներին առնչվող իրավական դաշտի բարելավմամբ՝ ապահովելու հեռարձակողների գործունեության արդար լիցենզավորումն ու կարգավորումը և լրագրողների իրավունքների պաշտպանությունը: Պատրաստվել են հեռուստահաղորդումներ և ֆիլմեր՝ բարձրացնելու հանրության իրազեկությունը փոփոխությունների անհրաժեշտության մասին: Հանրության մեդիա գրագիտության բարձրացմանն ուղղված սոցիալական հոլովակները կոչված էին ներկայացնելու ԶԼՄ-ների դերն ու կարևորությունը:

Արձագանքելով հեռարձակման ոլորտի իրավական կարգավորման պահանջներին՝ Ինտերնյուսը մշակեց նոր մոտեցումներ և միջազգային փորձն արտացոլող հայեցակարգ: Վերջինիս հիման վրա կբարելավվի հեռարձակման ոլորտին առնչվող օրենսդրությունը:

Լրագրողները և լրատվամիջոցները պարբերաբար ստանում էին իրավական աջակցություն՝ ներառյալ պաշտպանություն դատարանում: Ծրագրի մասին տեղեկատվությունը՝ ներառյալ իրավական աջակցության մասին «հարց ու պատասխան»-ը, ներկայացվեցին http://legal.media.am կայքում:

## CENTER FOR INFORMATION LAW AND POLICY

The Center for Information Law and Policy (CILP) was founded in 2005 by Internews to promote legislation and policy supporting the development of information society, progressive communication and freedom of information.

In 2006 CILP conducted a survey to reveal **the application of open source software** in state structures, educational institutions and NGOs. Later the Center hosted a regional conference on open source policy to exchange experience between Armenian and Eastern European professionals. CILP also made a considerable contribution to **the development of draft legal acts** and policy documents related to electronic governance, e-commerce, electronic communication and digital television.

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոնը ստեղծվել է 2005-ին՝ խթանելու ինֆորմացիոն հասարակությանը, առաջադեմ հաղորդակցությանը և ինֆորմացիայի ազատությանն առնչվող օրենսդրությունն ու քաղաքականությունը: 2006 թ.-ին կենտրոնն անցկացրեց հարցում՝ բացահայտելու բաց կոդով համակարգչային ծրագրերի կիրառումը պետական կառույցներում, կրթական հիմնարկներում և ՀԿ-ներում: Ավելի ուշ կենտրոնը կազմակերպեց տարածաշրջանային համաժողով՝ նվիրված բաց կոդով համակարգչային ծրագրերի քաղաքականությանը՝ Հայաստանի և Արևելյան Եվրոպայի մասնագետների միջև փորձի փոխանակման համար: Կենտրոնի մասնագետները զգալիորեն նպաստեցին նաև էլեկտրոնային կառավարմանը, էլեկտրոնային հաղորդակցությանն ու թվային հեռուստատեսությանն առնչվող փաստաթղթերի նախագծերի մշակմանը:

## ALTERA

Altera LLC was founded in 2003 to ensure Internews' sustainability and contribute to achieving its mission and goals. Altera provides a full range of services including scripting, film and PSA production and postproduction, video engineering, equipment loans as well as PR strategy development. Altera's clients include international organizations, non-profits and businesses from around the country.

## ԱԼՏԵՌԱ

Ալտեռա ՍՊԸ-ն հիմնադրվել է 2003 թ.-ին՝ ապահովելու Ինտերնյուսի ֆինանսական կայունությունը: Ալտեռան տրամադրում է ծառայությունների լայն սպեկտր՝ սցենարի մշակում, նկարահանում, ֆիլմերի և սոցիալական հոլովակների արտադրություն, տեսահինդեններինգ, վիդեո տեխնիկայի սպասարկում, հանրային հարաբերությունների ռազմավարության մշակում: Մեր գործընկերների թվում են Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և առևտրային կազմակերպություններ:

| Project Name<br>Ծրագրի անվանում | Donor<br>Դոնոր | Project Period<br>Ծրագրի իրականացման ժամկետը | Grant Amount<br>Դրամաշնորհի չափը |
|---|---|---|---|
| Crossroads<br><br>Խաչմերուկ | Eurasia Foundation – South Caucasus Cooperation Program; United Nations Development Fund for Women Armenia<br>Եվրասիա հիմնադրամի Հարավային Կովկասի համագործակցության ծրագիր<br>ՄԱԿ-ի Կանանց հիմնադրամ | December 2004 – March 2006<br>February 2006 – December 2006<br>2004 թ.-ի դեկտեմբեր – 2006 թ.-ի մարտ<br>2006 թ.-ի փետրվար - դեկտեմբեր | ԱՄՆ դոլար 48.701 USD<br>ԱՄՆ դոլար 20.000 USD |
| Kids' Crossroads<br><br>Մանկական խաչմերուկ | United States Agency for International Development<br>ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն | January 2005 – June 2007<br>2005 թ.-ի հունվար – 2007 թ.-ի հունիս | ԱՄՆ դոլար 327.247 USD |
| Kids Croassroads: Animation and Graphic Design Studio<br>Մանկական խաչմերուկ. Անիմացիայի և գրաֆիկական դիզայնի ստուդիա | United Nations Children's Fund Armenia<br>ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ | July 2005 – July 2007<br>2005 թ.-ի հուլիս – 2007 թ.-ի հուլիս | ԱՄՆ դոլար 29.984 USD |
| Mardavors<br><br>Մարդավորս | International Organization for Migration Mission in Armenia<br>Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան առաքելություն | September 2005 – September 2006<br>2005 թ.-ի սեպտեմբեր – 2006 թ.-ի սեպտեմբեր | ԱՄՆ դոլար 40.079 USD |
| Dialogue Through Camera<br><br>Երկխոսություն տեսախցիկի միջոցով | Conciliation Resourses/UK Foreign and Commonwealth Office<br>Հաշտեցման ռեսուրսներ/ՄԲ-ի Արտաքին և համագործակցության գրասենյակ | April 2006 – December 2006<br>2006 թ.-ի ապրիլ – 2006 թ.-ի դեկտեմբեր | ԱՄՆ դոլար 24.748 USD |
| Re-Media: Working with Radio<br><br>Re-Media: աշխատում ենք ռադիոյի հետ | Open Society Institute Assistance Foundation Armenia<br>Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամ Հայաստան | February 2006 – April 2007<br>2006 թ.-ի փետրվար – 2007 թ.-ի ապրիլ | ԱՄՆ դոլար 29.932 USD |
| Favio Veritas | Counterpart International Representation in Armenia, Civic Advocacy Support Program<br>Քաունթերփարթ ինթերնեշնլ ներկայացուցչություն Հայաստանում, Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր | August 2005 – August 2007<br>2005 թ.-ի օգոստոս – 2007 թ.-ի օգոստոս | AMD 42.984.573 դրամ |
| Center for Information Law and Policy<br><br>Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն | Open Society Institute Assistance Foundation Armenia<br>Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամ - Հայաստան | January 2006 – January 2007<br>2006 թ.-ի հունվար – 2007 թ.-ի հունվար | ԱՄՆ դոլար 30.790 USD |
| | Altera's contribution<br>Ալտերայի ներդրումը | | AMD 17.465.088 դրամ |
| | Membership fees<br>Անդամավճարներ | | AMD 50.000 դրամ |
| | Private donations<br>Մասնավոր նվիրատվություններ | | AMD 225.000 դրամ |

## Balance Sheet as at 31 December, 2006 / Հաշվապահական հաշվեկշիռ առ 01.01.2007

### Assets / Ակտիվ

| | |
|---|---|
| **Non Current Assets / Ոչ ընթացիկ ակտիվներ** | |
| Fixed Assets / Հիմնական միջոցներ | 74,312 |
| Non Current Tangible Assets In Progress / Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 511 |
| Intangible Assets / Ոչ նյութական ակտիվներ | 741 |
| Other Non Current Financial Assets / Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 50 |
| Other Non Current Assets / Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 1,586 |
| **Total Non Current Assets / Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **77,200** |
| | |
| **Current Assets / Ընթացիկ ակտիվներ** | |
| Inventory / Նյութեր | 208 |
| Goods / Ապրանքներ | 1,659 |
| Accounts receivable / Տրված ընթացիկ կանխավճարներ | 542 |
| Other accounts receivable / Այլ դեբիտորական պարտքեր | 26,857 |
| Cash and cash equivalent / Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 16,524 |
| **Total Current Assets / Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **45,790** |
| | |
| **Balance / Հաշվեկշիռ** | **122,990** |

### Equity and Liabilities / Պասիվ

| | |
|---|---|
| **Equity / Սեփական կապիտալ** | |
| Retained earnings / Կուտակված շահույթ | 2,378 |
| **Total Equity / Ընդամենը սեփական կապիտալ** | 2.378 |
| | |
| **Non Current Liabilities / Ոչ ընթացիկ պարտավորություններ** | |
| Grants Related To Assets / Ակտիվներին վերաբերող շնորհներ | 77,200 |
| Total Non Current Liabilities / Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 77,200 |
| | |
| **Current liabilities / Ընթացիկ պարտավորություններ** | |
| Accounts payable / Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 718 |
| Short-term accounts payable / Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 69 |
| Grants Related To Income / Եկամուտներին վերաբերող շնորհներ | 42,625 |
| **Total Current Liabilities / Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | 43,412 |
| | |
| **Balance / Հաշվեկշիռ** | 122,990 |

*Balance presented in thousands / Չափի միավորը՝ հազ. դրամ*






**CONTACTS**

3 Arshakunyats ave., 3rd floor, Yerevan 0023, Republic of Armenia
Tel.: ( +374 10) 58 36 20, Fax: ( +374 10) 56 90 41
E-mail: office@internews.am

ՀՀ, Երևան 0023, Արշակունյաց 3, 3-րդ հարկ
Հեռ. (+374 10) 58 36 20, Ֆաքս (+374 10) 56 90 41
Էլ. փոստ: office@internews.am

www.internews.am



This publication supported by Counterpart International's Civic Advocacy Support Program (CASP) and the American people through the United States Agency for International Development (USAID) under Cooperative Agreement No. 111 A 00 04 00056 00 through. Content, views and opinions expressed herein are those of the authors, and the responsibility of Internews, and do not necessarily reflect the views of Counterpart International, USAID, the United States Government.

Սույն հրապարակումը իրականացվել է Քաունթերփարթ ինթերնեշնլի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության № 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին Ինտերնյուսի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության, Միացյալ Նահանգների կառավարության տեսակետների հետ: